Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց ՊՈԱԿ» ենթակա ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *Բանավոր խոսքի զարգացումը հարցադրումների մեթոդով*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ *ՄԱՐՏՈՒՆԻ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ԴՊՐՈՑ՝ *Մադինայի միջնակարգ դպրոց*

Մարտունի-2022

Բովանդակություն

1.Ներածություն……..3

2.Գրական ակնարկ……...7

3.Փորձարարական հետազոտություն……...10

3.1. Խմբի նկարագիրը…….....10

3.2.Փորձարարական դասեր……...10

3.2.1.Փորձարարական դաս-1……10

3.3.2.Փորձարարական դաս-2……11

4.Եզրակացություն……12

5.Գրականության ցանկ……13

6.Հավելված……..14

1.Դասապլան-1……14

2.Դասապլան-2……18

1.Ներածություն

Ուսումնական գործունեության ընթացքում ամենակարևոր խնդիրներից մեկը աշակերտների խոսքի զարգացումն է, հաղորդակցվելու կարողության ձևավորումը, քանի որ մարդու հիմնական յուրահատկություններից մեկը հաղորդակցվելու ընդունակությունն է. խոսքի միջոցով են իրագործվում բարձրագույն հոգեկան գիտակցական գործընթացներն ու շփման առավել կատարյալ, սոցիալական տեսակետից անհրաժեշտ ձևերը:

Ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի գործընթաց է, և այն առավել արդյունավետ իրականացնելու համար հարկավոր է ճիշտ կազմակերպված աշխատանք, որի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ սովորողը գիտելիքների ձեռքբերմանը զուգահեռ ստանում է իր կյանքի հետագա գործունեության համար անհրաժեշտ սոցիալական փորձ: Ուսումնառության ընթացքում իրականացվում է երեխայի հոգեկանի զարգացումը, ձեռք է բերվում գիտելիք, մշակվում այլընտրանքային ճանապարհով գիտելիքների ձեռքբերման կարողություն, ձևավորվում ճանաչողական ընդունակություններ, մարդկանց և իր նկատմամբ սեփական վերաբերմունքի դրսևորում: Կրթության հետ միաժամանակ երեխան պետք է դառնա նախաձեռնող, կարողանա ինքնուրույն հետազոտել, ստեղծագործել, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում, փոխանցել իր իմացածը, ձեռք բերել հաղորդակցական, համագործակցային կարողություններ և ինքնուրույնություն: Կրտսեր դպրոցական տարիքը գիտելիքների կուտակման տարիք է, և այս տարիքի երեխաները պատրաստակամ են գիտելիքներ ձեռք բերելու հարցում: Ուսուցման հիմքը դրվում է ուսումնառության սկզբնական շրջանում և այնուհետև շարունակվում դպրոցական ողջ տարիների ընթացքում, և ոչ միայն…:

Ուսուցման ընթացքում ուսուցիչը կրտսեր դպրոցականների առջև խնդիր է դնում իր կողմից առաջադրվող հարցերին տալ լիարժեք և տրամաբանված պատասխաններ, խոսել ճիշտ ու գրագետ, խուսափել անհարկի կրկնություններից: Հատկապես ուշադրություն պետք է դարձնել, որ աշակերտը ազատ և անկաշկանդ մտածի և հաղորդակցվի, կարողանա հասկանալ տրված հարցերը և ճշգրիտ պատասխանել դրանց, կարողանա ճիշտ կողմնորոշվել խոսքային իրադրության մեջ: Ուսուցիչը կարող էերեխային առաջարկել պատմել իր, ընտանիքի, ընկերների, սիրելի իրի և այլ առարկաների կամ երևույթների մասին, սովորեցնում համեմատել և գտնել

առարկաների նմանություններն ու տարբերությունները և այլն, ձևավորում ենք դիմացինի խոսքը լսելու կարողություն:

Աշակերտներին կարելի է առաջարկել իրենց խոսքը կառուցել շաղկապների միջոցով: Խոսքի կառուցման այս եղանակը կնպաստի աշակերտների տրամաբանված խոսքի զարգացմանը: Տարրական դասարանում խոսքի զարգացմանը միտված աշխատանքներում պետք է ուշադրություն դարձնել նաև արտասանական վարժություններին (խոսքի տեմպ, ռիթմ, տրամաբանական շեշտ, մեղեդայնություն և այլն): Աշակերտները պետք է հասկանան, որ միալար ու անկենդան խոսքը, որը չունի զգացմունքային տարրեր, արտահայտիչ չէ, չի կարող հաճելի լինել ունկնդրի համար: Աշակերտների խոսքի զարգացման, կապակցված խոսքի ձևավորման համար կազմակերպվում են տարբեր խոսքային իրավիճակներում խոսք կառուցելու, երկխոսություններ և մենախոսություններ ստեղծելու կարողություններին միտված աշխատանքներ, աշակերտներին հանձնարարվում է վերարտադրել ընթերցած նյութի բովանդակությունը, այն կարդալ դերերով, բեմադրել՝ կիրառելով խոսքային և ոչ խոսքային (դիմախաղ, կեցվածք, ժեստ և այլն) միջոցներ:

Աշակերտների խոսքի զարգացմանը մեծապես նպաստում են նաև ընդօրինակման և ստեղծագործական բնույթի արտագրությունները, շուտասելուկների, ուղղախոսության կանոնների ճիշտ կիրառմամբ բառախաղերի արտասանությունը, ունկնդրած ստեղծագործության վերաբերյալ կարծիքների և տպավորությունների փոխանակումը, հիշողությամբ կամ նկարով պատմելը, նյութի վերարտադրելը նույնությամբ կամ ստեղծագործաբար: Երեխայի խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է նաև գեղարվեստական տարբեր ստեղծագործությունների ընթերցումը, որի նկատմամբ սերը դրվում է տարրական դասարանում:

Տարրական դասարաններում ուսումնական նյութն անցնելիս ուսուցիչը սովորեցնում է դուրս գրել հերոսներին բնութագրող բառերն ու արտահայտությունները, ձևավորում հերոսների արարքների դրդապատճառը որոշելու կարողություններ, պահանջում բանավոր կամ գրավոր արտահայտել իրենց կարծիքը հերոսների վարքագծի կամ դեպքերի վերաբերյալ: Ուսուցչի կողմից պետք է մշակվի նաև խոսքային տարբեր իրավիճակներում համապատասխան տարբեր ոճերով կապակցված խոսք կառուցելու կարողություններ. էքսկուրսիաների, դիտումների միջոցով կառուցել նկարագրական խոսք բնության, այս կամ այն առարկայի կամ երևույթի վերաբերյալ՝ կիրառելով ստեղծագործական և երևակայական կարողություններ, կազմել դատողական խոսք կարդացածի կամ լսածի վերաբերյալ

և այլն: Խոսքի հետագա զարգացմանը մեծապես կարող է նպաստել նաև լեզվական գիտելիքների հիման վրա աշակերտների խոսքի ոճական-քերականական հարստացումը, խոսքը լսելու և հարկ եղած դեպքում բանավիճելու կարողության զարգացումը, լսած նյութից խոսքի գլխավոր միտքն առանձնացնելը, իրավիճակին համապատասխան ոչ ծավալուն խոսք կառուցելու, սկիզբը կամ ավարտը հորինելու կարողությունների մշակումը և այլն: Խոսքի զարգացմանն ուղղված վերոնշյալ բոլոր աշխատանքները հետապնդում են մեկ նպատակ՝ զարգացնել աշակերտների պատկերացումները, ընդարձակել մտահորիզոնը, ձևավորել բարոյական վարքագիծ, իսկ սերնդի կրթության և դաստիարակության գործընթացն իրականացվում է հանրակրթական դպրոցում:

Երեխայի բանավոր խոսքի զարգացման նպատակն ու խնդիրները.

Լեզուն նախ և առաջ հաղորդակցման միջոց է: Հետևաբար ռուսաց լեզվի ուսուցման և խոսքի զարգացման հիմնական նպատակը պետք է լինի երեխայի՝ շրջապատի հետ խոսքային հաղորդակցման ունակությունների ձևավորումն ու բանավոր խոսքի զարգացումը:

Բանավոր Խոսքի զարգացման հիմնական խնդիրներն են.

_ ճիշտ արտահայտվելու կարողությունը,

_ բանավոր խոսքի հարուստ բովանդակությունը:

Լեզվի հիմնական միավորներն են հնչյունը, վանկը, բառը, բառակապակցություն, նախադասություն, տեքստ:

Երեխայի խոսքի զարգացման խնդիրները կարող են լինել.

1.խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակում,

2.բառապաշարի զարգացում,

3. խոսքի քերականական կողմի, այսինքն՝ քերականական կառուցվածքի ընկալման ձևավորումը,

4.կապակցված խոսքի զարգացում (մենախոսություն և երխոսություն)

5.խոսքի և լեզվի տարրական երևույթների գիտակցման ձևավորում

6.գեղարվեստական գրականության հետ ծանոթացում:

Խոսքի հնչյունային կուլտուրայիդաստիարակումը.

Այս խնդիրն առնչվում է հնչյունների յուրացման և արտաբերման հետ, ինչը նախատեսում է.

_խոսքային լսողության զարգացում,
_ճիշտ հնչարտաբերում,
_ խոսքի արտահայտչական միջոցների տիրապետում. (ուժգնություն, առոգանություն, հնչերանգ, տեմպ):

Կապակցված խոսքի զարգացում.

Այն ներառում է մենախոսության և երկխոսության կարողությունների զարգացում: Կապակցված խոսքը սկսում է ձևավորվել այն ժամանակ, երբ երեխան հաղորդակցվելու կարիք է ունենում: Ուստի կապակցված խոսքի ձևավորումը սկսում է երկխոսության կարողությունների զարգացումից:

Կարևոր է երեխային սովորեցնել.

_ լսել և հասկանալ դիմացինի խոսքը,միտքը
_ձևակերպել իր միտքը,երկխոսությունը առաջ տանել,
_ հարցեր տալ և պատասխանել՝ օգտվելով լեզվական տարբեր միջոցներից:

Բանավոր խոսքի զարգացման մեթոդական սկզբունքները.

Երեխան բանավոր խոսքին տիրապետում է կյանքի առաջին մի քանի տարիներին: Դպրոցի խնդիրն է զարգացնել երեխայի խոսքը: Խոսքի զարգացման ընթացքում շրջապատի հետ շփման, հաղորդակցության արդյունքում ձևավորվում են երեխայի խոսքային հաղորդակցական ունակությունները, զարգանում է նրա բանավոր խոսքը: Խոսքի զարգացումը հոգեկան բարձր իմացական գործընթաց է և սերտորեն կապված է մտածողության հետ: Խոսքն ունի զարգացման իր փուլերը, որոնք ընթանում են երեխայի տարիքային առանձնահատկություններին համապատասխան:

Երեխայի խոսքի ձևավորման գործընթացը կառուցվում է ոչ միայն ընդհանուր դիդակտիկական, այլև որոշակի մեթոդական սկզբունքների հիման վրա, որոնցով ղեկավարվելիս ուսուցիչն ընտրում է համապատասխան մեթոդները, հնարքներն ու միջոցները:

2.Գրական ակնարկ

Ուսուցման ընթացքում տարբեր մեթոդներ կիրառելիս օգտագործում են հարցեր և հարցադրումներ, որոնք նպատակ ունեն պարզելու սովորողների գիտելիքների ընդհանուր մակարդակը, խթանելու նրանց ակտիվությունն ու ներգրավվածությունը դասապրոցեսին:

Նկարագրությունը

Հարցադրումների մեթոդը աշակերտների մտածողությունը խթանելու,տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու, համակարգելու,ստեղծագործական և քննադատական մտածողությունը զարգացնելու կարևոր գործոն են:

Ուսուցման ընթացքում կարևոր է ոչ միայն հարցերը ճշգրիտ ներկայացնելը, այլև դրանց տրամաբանական հերթականությունն ապահովելը, որի բացակայությունը կարող է աշակերտներին շեղել մատուցվող նյութից կամ դասի նպատակից:

Հարցադրումների վերջնական նպատակը աշակերտներից պատասխան և արձագանք ակնկալելն է և ուսուցանվող նյութի ընկալումն ապահովելն է: Ուսուցման ընթացքում տարբեր տեսակի հարցադրումները հիմնականում օգտագործվում են հետևյալ նպատակներին հասնելու համար:

1.Վարժեցնող-մարզող հարցեր – նպատակ ունեն ընդլայնելու նյութի ընկալման և ըմբռնման շրջանակները:
2.Ստուգող հարցեր – նպատակ ունեն վերահսկելու և գնահատելու նյութի ըմբռնման մակարդակը:
Հարցադրումների յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձնահատկությունը և կարևոր դեր ունի դասավանդման ընթացքում:

_ Առաջացնում են հետաքրքրությունը: Տեղին և ժամանակին արված հարցադրումը կարող է փոխել ստացվող տեղեկատվության արագությունն ու ուղղվածությունը և խթանել աշակերտների ակտիվությունը:
_ Խթանում են ուսման գործընթացում աշակերտների ներգրավումը:
_ Խրախուսում են մտածողությունը.

Ուղղորդող հարցադրումներ

Ուղղորդող հարցադրումներն օգնում են աշակերտներին կենտրոնանալու միջոցով ուշադրությունը սևեռել դիտարկվող նյութի այս կամ այն մասի վրա:Մասնավորապես այն նպատակահարմար է օգտագործել նոր թեմային անցնելուց առաջ անցած նյութը ամփոփելու համար: Կարևոր է նաև, թե աշակերտներին ուղղորդելու նպատակով հարցադրումներև երբ և որ պահին են արվում:

Հարցադրման մեթոդով ուսուցման նպատակները.

Հարցադրումների կիրառությունը ռուսաց լեզվի դասավանդման գործընթացում ամենահզոր գործիքներից մեկն է, և դրանց ճիշտ կիրառությունը զգալիորեն կարող է բարձրացնել ուսուցման որակը և ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը: Հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն է կազմում: Հարցադրումների կիրառմամբ ոչ միայն կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա: Ավելին, ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են աշակերտների ինքնավստահությունը:

Դրական կողմերը.

_Ուսուցման գործընթացում սովորողների ակտիվության ու ներգրավվածության աճին:
_ Նյութի յուրացման ու ընկալման շրջանակների ընդլայնմանը:
_Նյութի ընկալման մակարդակը պարզելուն և գնահատելուն:
_ Սովորողների կողմից ուսուցանվող նյութի կամ գաղափարների վերաբերյալ սեփական եզրահանգումներ կատարելուն:
_Սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը և այլն:

Բացասական կողմերը.

_ Չնայած հարցադրումների մեծ մասը որոշ դեպքերում տվյալ պահին խթանում են աշակերտների մտածողությունը, սակայն հնարավորություն չեն տալիս աշակերտին մտքերն ինտեգրելու և մանրազնին, կշռադատված եզրակացություն կամ նախորդող հարցադրման հիման վրա տեսակետ ձևավորելու:
_ Ուսուցիչների կողմից նպատակային տրված հարցերը նպաստում են նյութի արդյունավետ յուրացմանը, սակայն ոչ միշտ են օգնում զարգացնելու աշակերտների հարցեր տալու հմտությունը:
_ Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ այս հարցերին պատասխանում են հիմնականում դասարանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, մյուսները պարզապես լինում են լսողի դերում:

3.Փորձարարական հետազոտություն

3.1.Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Մադինայի միջնակարգ դպրոցի 2-րդ դասարանում, քանի որ այս դասարանում սովորողների որոշ մասը չի ներգրավվում դասապրոցեսին: Այդ իսկ պատճառով ես որոշեցի այդ աշակերտների նկատմամբ կիրառել հարցադրումների մեթոդը:

Այս դասարանում սովորում են 6աշակերտ՝ 3 աղջիկ և 3 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիություն և հմտություններ: Ռուսերեն այս դասարանում ուսուցանվում է շաբաթական 2 ժամ և դասացուցակում այն տեղադրված է 2-րդ կամ 3-րդ ժամերին:
Այս դասարանի հիմնական խնդիրն է աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսի մեջ, ինչը պատճառ դարձավ, որ ես իմ հետազոտական աշխատանքը իրականացնեմ հարցադրումների միջոցով, որով կբացահայտեմ նաև, յուրաքանչյուր աշակերտի մտավոր ունակություններն ու կարողությունները ռուսաց լեզվից:

3.2.Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը <<Врачь >>թեման է (տե՛ս դասապլան-1 էջ՝ 14): Դասաժամը սկսեցի տնային աշխատանքները ստուգելով, որոշակի սխալներ թույլ տված աշակերտներին տրվեց բանավոր հետադարձ կապ: Այնուհետև հարցադրումների մեթոդով ամփոփվեց նախորդ դասը:Ամփոփեցինք << Врачь >> թեման, որպեսզի ստուգվեին աշակերտների ձեռք բերած գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ: Աշակերտները պատասխանեցին առաջադրված հարցադրումներին իմ ուղղորդող հարցերի օգնությամբ:

Դասը քննարկելուց և ամփոփելուց հետո **փոխանցվող հարցերի** միջոցով՝ գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտներից հարցադրումիս պատասխանը ստանալուց հետո՝ հարցադրումն ուղղեցի նաև միջին և համեմատաբար ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին: Զգալով, որ սովորողների մի խմբի համար ընկալելի չէ հարցադրումը, սկսեցի **հուշող հարցեր** տալ, որոնք նրանց օգնեցին գտնել պատասխանները: Այսպիսով ինձ հաջողվեց ամբողջ դասարանին ներգարավել դասապրոցեսին:
Մինչ թեման ամփոփելը աշակերտները հնչեցրին իրենց համար անհասկանալի հարցերը, տրվեց լրացուցիչ բացատրություններ:

Թեման ամփոփելուց հետո հանձնարարվեց նոր դասը: Նոր դասի թեման էր <<Непобедимый петух>> հեքիաթը:

3.3.Փորձարարական դաս-2

Այսօրվա դասի թեման էր <<Непобедимый петух>> տե՛ս դասպլան-2 էջ՝ 18): Նոր դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, ինչին հաջորդեց նախորդ դասի հարցադրումների միջոցով ամփոփումը:

Օրվա թեմայի վերաբերյալ, իմ և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների կողմից՝ համեմատաբար ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին տրվեց լրացուցիչ բացատրություն: Երեխաների խոսքով դասավանդման այս մեթոդի կիարռումը իրենց ոչ միայն դուր եկավ, այլ նաև օգնեց նոր գիտելիքներ ձեռք բերել և իմացածը ավելի արդյունավետ արտահայտել:

Թեման ամրապնդելու, ինչպես նաև ամփոփելու նպատակով դարձյալ կիրառեցի հարցադրումների մեթոդը՝ և ստուգեցի թեմայի հերոսներին գնահատելու, նրանց վերաբերյալ դատողություններ անելու սովորողների կարողությունը: Հաշվի առնելով այն փաստը, որ դատողությունները ձևավորվում են աշակերտների կողմից տարբեր արժեքների համադրման արդյունքում, ինձ համար այդ մեթոդի շնորհիվ պարզ դարձավ, որ հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման ընթացքում՝ շատ ավելի մեծ խնդիրներ է լուծում քան փաստերի զուտ մտապահումը: Դասի վերջում հանձնարարվեց տնային աշխատանք և նոր դասի թեմա <<Теремок >>:

4. Եզրակացություն

Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար՝ անցկացվեց 2 տարբերակված դասեր, որի ժամանակ թե իմ և թե բարձր առաջադիմություն ունեցող սովորողների կողմից՝ միջին առաջադիմության տեր աշակերտներն տրվեցին **հուշող**, **ենթատեքստով**,և **ուղղորդող** հարցեր:
Աշակերտները խոստովանեցին, որ բանավոր տրամադրված հետադարձ կապը ավելի արդյունավետ է:

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները, եկա այն եզրակացության, որ ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1.հարցադրումների մեթոդի կիրառում դասաժամերին

2. բանավոր հետադարձ կապի տրամադրում

3.թեմայի հիշեցում, ամրապնդում և ամփոփում՝ անհատական հարցադրումների մեթոդով:

5.Օգտագործված գրականության ցանկ

1.Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. ,,Մանկավարժություն,, Մանկավարժ 2005

2.Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր՝ <<Ռուսաց լեզու>> 2007

3. Սովորողների լեզվական, լեզվաբանական, հաղորդակցական եվ մշակութաբանական կոմպետենցիաների ձևավորումը դպրոցում., Դարբինյան Հերմինե., Մխիթար Գոշ, գիտամեթոդական հոդվածներ.,Եր 2019 N2

4. Հովհաննիսյան Հ. և ուրիշներ, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2004թ.

6.Հավելված

Դասապլան-1

Առարկա՝	Ռուսաց Լեզու	Ամսաթիվ	15.04.2022	Կիսամյակ	II	Դասարան	3
Թեմա՝	<< Враль >>						
Օգտագործվող նյութեր՝	*Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան, համացանց*						
Դասի նպատակը՝	լսել և հասկանալ դիմացինի խոսքը,միտքը ձևակերպել իր միտքը,երկխոսությունը առաջ տանել, հարցեր տալ և պատասխանել՝ օգտվելով լեզվական տարբեր միջոցներից						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Պատմել դասը, վերլուծել հարցեր տալ և պատասխանել						
Գործողություններ(ժամ/տ	Ուսումնական		Ուսումնական				

Խողություն)	գործունեություն *Աշակերտներ*	գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ (ներ)
5րոպե-սկիզբ 10րոպե-ընթացք	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները Պատասխանել հարցերին Փոխադարձ հարցեր տալ, և քննարկել պատասխանները փոխանցվող հարցերի միջոցով՝ գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտները հարցադրումն	Ողջունել դասարանին, և/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցադրումներ հուշող հարցերի միջոցով օգնել աշակերտներին գտնել հարցադրումների պատասխանները	*1.Ի՞նչ հասկացաք դասից* *2.Ի՞նչ դժվարություններ ունեցաք դասը սովորելիս* *3.Որքանո՞վ օգնեց ձեզ Հարցադրումների մեթոդը*	*Հարցադրումների մեթոդ*

15րոպե 12րոպե	ուղղեցին նաև միջին և համեմատաբար ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին աշակերտները պատասխանեցին դասընկերների հարցերին, պատմեցին դասը *Լուռ լսել դասը , կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր, աշխատանք դասագրքի հետ*	Հետևել կատարվող աշխատանքներին, կատարել շտկումներ Ուղղորդել սովորողներին Հետևել կատարվող աշխատանքներին, անհրաժեշտության դեպքում տրամադրել անհատական բանվոր, գրավոր հետադարձ կապ: Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն		*Հարցադրումների մեթոդ* *Կարճ դասախոսություն՝ ստեղծելով միջառարկայական կապ(հայոց գրականություն)*

Յրոպե-ավարտ		Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում		
Նոր դաս	<<Непобедимый петух>>			

Դասապլան-2

Առարկա՝	Ռուսաց Լեզու	Ամսաթիվ	20.04.2022	Կիսամյակ	II	Դասարան	3
Թեմա՝	<<Непобедимый петух>>						
Օգտագործվող նյութեր՝	*Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, համացանց*						
Դասի նպատակը՝	Թեման պատմել, կատարել համապատասխան վարժությունները Հարցադրումների միջոցով ներկայացնել թեման հարցեր տալ և պատասխանել						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Վերլուծել հերոսների կերպարները Ինքնուրույն հարցեր ձևակերպել Ինքնուրույն քննարկում ծավալել թեմայի վերաբերյալ Բանավոր խոսքի միջոցով, ցույց տալ պատրաստվածության մակարդակը						

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)

5րոպե-սկիզբ 10րոպե-ընթացք 10 րոպե	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:Ներկայացնել տնային աշխատանքները Բոլոր աշակերտների մասնակցությամբ քննարկվեց նախորդ թեման, հնչեցվեցին հետաքրքրող հարցերը, ստեղծվեց «հավելյալ» գիտելիք Պատասխանել հարցերին, տալ փոխադարձ հարցեր, հնչեցնել կարծիքներ, կատարել նշումներ տետրերում	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը Նախորդ դասի քննարկում, բանավոր առաջ մղող հետադարձ կապի տրամադրում Նոր թեմայի հաղորդում աշակերտների մասնակցությամբ	1.Ի՞նչ հասկացաք դասից 2.Ո՞րն էր դասի նմանությունը նախորդ թեմային 3.Ո՞րն էր տարբերությունը նախորդ թեմայից	*Հարցադրումների մեթոդ*

15րոպե	Հարցադրումների մեթոդով ուսուցում Բարձր առաջադիմությամբ տեր աշակերտները հարցադրումների միջոցով դասընկերներին բացատրեցին դասի՝ նրանց համար անհասկանալի հատվածները Յուրաքանչյուր աշակերտ պատմեց իր հավանած	Թեման ամրապնդելու, ամփոփելու, ինչպես նաև ամբողջ դասարանի ներգրավվածությունը ապահովելու համար փոխանցվող հարցերի և հուշող հարցերի մեթոդի կիրառում Տրամադրվեց առաջ մղող բանավոր հետադարձ կապ և ուղղորդումներ Թեման ամփոփվեց հարց ու պատասխանով Տնային աշխատանքի հանձնարարում		*Հարցադրումների մեթոդ*

5Դրոպե-ավարտ	կերպարի մասին	Բացատրվեց նոր դասը		*Սովորողներին տրվեցին ուղղորդող հարցեր*
Նոր Դաս	*Теремок*			